ռավարութեան ներկայացուցիչներին, գլխաւորապէս մինիստրների նախագահ Կոմպին և ծովային նախարար՝ Պելտանին, մեղադրելով սոցա երենց հակաօրինական ընթացքի և կաշառակերութեան մէջ։ Կոմպ յատկապէս մեղադրուում էր նրա համար, որպէս թէ Շարտրեօզի փակման ժամանակ կաշառք է պահանջել։ Այս մեղադրանքը քննուելով պատգամաւորների պալատում մայիսի 6-ին և 15-ին (Ն. տ.), պարզուեց, որ կղերամիտների մեղադրանքը ո՛չ այլ ինչ է, բայց թէ անլուր զրպարտութիւն։ Այսպիսով կղերամիտ կուսակցութիւնը մի անգամ ևս աշխարհի առաջ պարտութիւն կրեց։

---

## ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յունիսի 3-ին և 4-ին (Ն. տ.) Դարմշտատում Բելգիայի համալսարանի աստուածաբանական գիտութեանց հեղինակաւոր ուսուցչապետ Հարնակի նախագահութեամբ գումարուել է 14-րդ աւետարանական համաժողովը։ Ժողովը, ինչպէս գերմանական թերթերն են նկարագրում, խիստ բազմամարդ է եղել։ Ներկայ են եղել Գերմանիայի զանազան կողմերից մասնագէտ գիտնականներ։ Թողնելով ժողովի ընդհանուր նկարագրութիւնը մի կողմն, մենք համառօտ կերպով առաջ կբերենք Մարբուրգի համալսարանի քրիստոնէական բարոյագիտութեան ուսուցչապետ Հեռմանի ժողովում կարդացած դասախօսութիւնը։ Այդ դասախօսութիւնը, որ կրում էր հետևեալ վերնագիրը «Յիսուսի բարոյական հայեացքները և նրանց յարաբերութիւնը ներկայ կեանքի բարոյական—ընկերավարական շարժումների հետ», տևել է մօտ մէկ ու կէս ժամ։ Դասախօսը շեշտել է գլխաւորապէս Քրիստոսի քարոզած արդարութեան և սիրոյ գաղափարները և դրանց հիման վրայ փորձել է ցոյց տալ Քրիստի բարոյական հայեացքների յարաբերութիւնը արդի կեանքի մէջ առաջ եկող բարոյական և ընկերավարական շարժումների հետ։ Նիւթն ինքնըստինքեան խիստ ծանր և վերացական լինելով, ինչպէս die Christliche Welt-ն է ասում, ունկնդիրների վրայ չի թողել այն տպաւորութիւնը, որ սպասուում էր տաղանդաւոր ուսուցչապետից։ Հեռմանի արծարծած մտքերը առիթ են տուել խիստ հետաքրքրական վիճաբանութեան, որ տևել է մօտ երկու ժամ։

— Երկու տարի է, որ Գերմանիայում «ներքին առաքելութեան ընդհանուր համաժողով չի գումարուել»։ Chronik der

Christlichen Welt-ի ասելով այդպիսի համաժողով պէտք է գումարուի Բրաունշվայգում, որ կտևէ սեպտեմբերի 21-ից մինչև 24 (Ն. տ.): Այս համաժողովը 32-րդն է, առաջ է բերուած նաև համաժողովի զբաղմունքի ծրագիրը:

— Լայպցիգի համալսարանի աստուածաբանութեան Լիցենցիատ Կունցէ, միաժամանակ հրաւէր ստանալով Ռոստոկի և Վիեննայի համալսարանների կողմից, ընդունել է վերջինի առաջարկութիւնը: Առաջիկայ կիսամեակում Լիցենցիատ Կունցէ, իբրև իսկական ուսուցչապետ, Վիեննայի համալսարանում կկարդայ պատմական աստուածաբանութիւն:

—Այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս պրուսական կառավարութիւնը համակրալից վերաբերմունք է ցոյց տալիս գէպի Գերմանիայում գտնուած կաթոլիկները, ազգայնականների աչքում ծառայում է, իբրև ապացոյց, թէ կարող են այդ պատճառով ազգայնութեան և բողոքականութեան շահերը վտանգուել: Ազգայնականները, որ Ռայխստագում մինչև այժմ միացած կաթոլիկների (կենդրոնի) հետ կռուում էին ռամկավարականների դէմ, վերջին ընտրութիւնների ժամանակ բաժանուել են նրանցից: Այս իրողութեան առանձնապէս զարկ տուեց Վիլհելմ II կայսեր Վատիկանին տուած այցելութիւնը: Այսպիսով ազգայնականները վերջ ու առաջ կմիանան ռամկավարականների հետ և կմաքառեն ընդհանուր թշնամու՝ այն է կղերականութեան դէմ: Եւ այս երևոյթը ապագայում խիստ վտանգաւոր դրութիւն կստեղծէ Գերմանիայում կաթոլիկութեան համար:

# ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ·

Ս· Էջմիածնի տօնը վանքի մէջ այս տարի կատարուեց սովորական կարգով· մինչ լրանում էր Նրա գոյութեան 1600 ամեակը և այդ առթիւ տարուայ սկզբում նախատեսուել էին մի շարք տօնական հանդէսներ: Իւմիւռս երկրի տարածուած Էջմիածնի հարազատները այս կամ այլ կերպ այդ օրը յատուկ յիշատակութեան արժանի են արել, եկեղեցական տօնախմբութիւններ կատարելով, ճառասութիւնների